

ՀՈՒՎԱԾՆԵՐ

ՄԱԿ ԽԽՎ ՀԱՄԱԳՈՒԽՄԱՐԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

Ռ. ԵՁԵԿՅԱՆ

Կոմունիստական շինարարության բոլոր փուլերում գիտությունը առաջատար տեղ է զբաղեցնում ժողովրդատնտեսական խնդիրների մշակման և իրացման գործում: «Սոցիալիզմը և գիտությունը անբաժանելի են,— ասել է Լ. Ի. Բրեժնևը,— և, դրանումն է սոցիալիզմի հաղթանակի պատճառներից մեկը: Միայն սոցիալիզմը հնարավոր դարձրեց գիտության նվաճումների օգտագործումը ի շահ ժողովրդի, թույլ տվեց բացահայտելու այն ստեղծագործական կարողություններն ու տաղանդները, որոնք առատորեն առկա են ամեն մի ժողովրդի մեջ...»¹:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո արտադրության հանրային սեփականության ստեղծումը նպաստավոր պայմաններ ստեղծեց գիտության ու տեխնիկայի զարգացման, գիտության ու արտադրության դաշինքի համար: Գիտությունը դարձավ սոցիալիզմի սկզբունքներով հասարակության վերափոխման հզոր զենքը:

Գեոևս սովետական իշխանության առաջին տարիներին Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ գիտությունը և արտադրությունը պետք է գտնվեն սերտ կապի մեջ: «Անհրաժեշտ է,— գրել է նա,— որպեսզի գիտությունը դառնա ժողովրդական մասսաների սեփականությունը, գիտության և տեխնիկայի նվաճումները ծառայեն ժողովրդի շահերին»: Նա համոզված էր, որ «գիտության ներկայացուցիչների, պրոլետարիատի ու տեխնիկայի միության առաջ չի կարող դիմանալ և ոչ մի մոլթ ուժ»²:

Գիտության արագ զարգացումը հսկայական ազդեցություն է գործում արտադրողական ուժերի զարգացման, տեխնիկական առաջադիմության վրա: Առանց գիտության և տեխնիկայի նվաճումների, նրանց արդյունքների օգտագործման հնարավոր չէր ստեղծել սոցիալիստական արտադրություն: Գիտության նվաճումների կիրառումը արտադրության տարբեր ճյուղերում հիմնովին վերափոխում է մարդու աշխատանքային գործունեության բնույթը, մեծ չափով ազդում նրա նյութական կյանքի վրա: Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ առանց նոր տեխնիկայի ու գիտության հայտնագործությունների

¹ Լ. Ի. Բրեժնև, Հայրենական գիտության պարծանքը, Ե., 1975, էջ 7:

² Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 512:

անհնար է կոմունիզմի կառուցումը: Գիտությունը գնալով ավելի ու ավելի է դառնում անմիջական արտադրողական ուժ, իսկ արտադրությունը՝ գիտության տեխնոլոգիական օգտագործման բաղա:

Ժամանակակից պայմաններում գիտության կապը արտադրության հետ դառնում է այնքան ամուր, որ գիտությունը հանդես է գալիս որպես յուրաքանչյուր արտադրական պրոցեսի հիմքը, իսկ ինքը գիտական գործունեությունն ընդունում է արտադրական բնույթ, կարծես թե ձուլվում է արտադրության հետ: Գիտա-արտադրական միասնական կոմպլեքսում վերանում են գիտահետազոտական և արտադրական գործունեության միջև եղած սահմանները, գիտական հետազոտությունները կատարվում են ոչ միայն ինստիտուտներում և լաբորատորիաներում, այլև արտադրական ձեռնարկություններում:

Սովետական գիտությունը անմիջական մասնակցություն ունենալով կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը՝ դրանով իսկ վիթխարի ազդեցություն է գործում հասարակական կյանքի, սոցիալ-քաղաքական երեվույթների վրա:

«Կուսակցությունը ամեն կերպ կնպաստի կոմունիստական հասարակարգի կառուցման գործում գիտության դերի հետագա ուժեղացմանը,—ասված է ՍՄԿԿ ծրագրում,— արտադրողական ուժերի զարգացման նոր հնարավորություններ բացող հետազոտությունների խրախուսմանը, պրակտիկայում գիտատեխնիկական նորագույն նվաճումների լայն և արագ արմատավորմանը, էքսպերիմենտալ աշխատանքների, այդ թվում՝ անմիջականորեն արտադրության մեջ կատարվող աշխատանքների վճռական վերելքին, գիտատեխնիկական ինֆորմացիայի հայրենական և արտասահմանյան առաջավոր փորձի ուսումնասիրման ու տարածման ամբողջ համակարգի օրինակելի դրվածքին: Գիտությունը լրիվ շահով կդառնա անմիջական արտադրողական ուժ»³: Գիտությունը անմիջական արտադրողական ուժ դարձնելը նշանակում է նրա խոր թափանցումը արտադրության բոլոր ոլորտները, նրա տեխնիկայի և տեխնոլոգիայի մեջ: Արտադրության մեջ գիտության դերի հետագա ուժեղացման համար անհրաժեշտ է «ամրապնդել գիտական, նախագծային և կոնստրուկտորական կազմակերպությունների նյութական բազան՝ սարքերով, սարքավորումներով, նյութերով...»⁴:

Եթե արտադրությունը գիտության առաջ շարունակ նոր և ավելի բարդ խնդիրներ է դնում, ապա գիտությունն իր կողմից առաջարկում է դրանց լուծման արդյունավետ եղանակներ: «Եթե հասարակության մեջ առաջանում է տեխնիկական պահանջմունք,— գրել է Ֆ. Էնգելսը,— ապա դա գիտությանը ավելի է առաջ մղում, քան տասնյակ համալսարաններ»⁵:

Արտադրության մեջ գիտության նվաճումների օգտագործումը հնարավոր չէ առանց գիտական աշխատողների լայն մասնակցության, ձեռնարկությունների ինժեներների հետ համատեղ գործունեության: Գիտության և արտադրության միաձուլման կոնկրետ ձևը գիտնականների ու ինժեներների աշխատանքի ավելի մեծ միավորումն է:

ՍՄԿԿ XXIV համագումարին տրված Կենտկոմի հաշվետվության մեջ ասված է. «Մեր առջև ծառայած է պատմական կարևորություն ունեցող խնդիր՝

³ «ՍՄԿԿ ծրագիրը և կանոնադրությունը», էջ 90:

⁴ «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 315:

⁵ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 39, с. 174.

գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները օրգանապես միացնել տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելութունների հետ, ավելի լայնորեն զարգացնել արտադրության հետ գիտության միացման, սոցիալիզմին հատուկ ձևերը»⁶։ ՍՄԿԿ XXV համագումարն ընդգծեց, որ դրա համար անհրաժեշտ է էլ ավելի ծավալել ֆունդամենտալ հետազոտությունները, գիտնականների ուժերը և ուշադրությունը կենտրոնացնել գիտատեխնիկական առաջադիմության առավել կարևոր ու հեռանկարային ուղղությունների վրա։ Գիտահետազոտական, կոնստրուկտորական կազմակերպությունների առջև խնդիր է դրվում ավելի մանրակրկիտ մշակելու նոր տեխնիկայի նմուշները և նոր տեխնոլոգիական պրոցեսները՝ դրանք ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու համար։ Հարկավոր է գիտնականների ջանքերը կենտրոնացնել առավել կարևոր պրոբլեմների լուծման վրա, ամրապնդել գիտության կապը արտադրության հետ, արագացնել նրա նվաճումների կիրառումը ժողովրդական տնտեսության մեջ, բարձրացնել ինստիտուտների, ամբիոնների ու լաբորատորիաների աշխատանքի արդյունավետությունը, հասնել այն բանին, որ յուրաքանչյուր գիտական կոլեկտիվում ստեղծվի իսկապես ստեղծագործական մթնոլորտ⁷։

ՍՄԿԿ XXV համագումարը խնդիր դրեց ապահովել արտադրության հետ գիտության կապի ձևերի հետագա կատարելագործումը, արագացնել ժողովրդական տնտեսության մեջ գիտական հայտնագործությունների արմատավորումը։ Դրա համար անհրաժեշտ է զգալիորեն ընդլայնել հետազոտություններն ու մշակումները արդյունաբերության մեջ, ձեռնարկություններում ըստեղծել կոնստրուկտորական բյուրոներ, փորձնական հզոր բազա, ապահովել գիտական կազմերի ներհոսք արդյունաբերություն⁸։

ՍՄԿԿ XXV համագումարում նշվեց գիտական հետազոտությունների արդյունավետության և որակի բարձրացման անհրաժեշտությունը և ընդգրծվեց, որ գիտության ու տեխնիկայի մշտական կապի մեջ պետք է արտահայտվի ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության հաջողությունը։ Այդ նպատակով խնդիր դրվեց ապահովել արտադրության և գիտության կապի ձևերի հետագա կատարելագործումը, արագացնել գիտական նվաճումների արմատավորումը ժողովրդական տնտեսության մեջ, բարձրացնել առաջարկվող հանձնարարականների հիմնավորվածությունը և գիտական կոլեկտիվների ու նրանց ղեկավարների պատասխանատվությունը հետազոտությունների մակարդակի և որակի համար։

Այդ ամենը գիտնականների առջև դնում են պատասխանատու խնդիրներ։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում արտասանած ճառում ընկեր Լ. Ի. Բրեժնևն ասաց, որ կուսակցությունը գիտնականներից սպասում է նոր պրոցեսների ու երևույթների ավելի ու ավելի խոր ու համարձակ հետազոտում, ակտիվ ավանդ գիտատեխնիկական առաջադիմության գործում։

Հատկապես վերջին տարիներին ավելի սրույթամբ դրվեց արտադրության հետ գիտության կապի ամրապնդման խնդիրը։ Ինչպես գիտնականները, այնպես էլ արտադրության մեջ զբաղվողները մեծ աշխատանք են ծավալում այդ

⁶ «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», էջ 76։

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 275։

⁸ «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», 1976, էջ 235։

խնդրի գործնական լուծման ուղղութիւնը: Այդ գործում մեծ է ՍՍՀՄ գիտութիւնների ակադեմիայի և հանրապետական ակադեմիաների դերը:

Ինչպես Միութեան, այնպես էլ մեր հանրապետութեան գիտնականները զգալի հաջողութիւնների հասան IX հնգամյակի տարիներին: Նրանք այդ ժամանակաշրջանում ավարտեցին հետազոտութիւնները ժողովրդատնտեսական կարևոր նշանակութիւն ունեցող 200 թեմաների գծով: Հաջողութեամբ իրականացնելով բնական և հասարակական գիտութիւնների զարգացման հնգամյա պլանով նախատեսված ծրագիրը, հանրապետութեան գիտնականները զգալի ձեռքբերումներ ունեցան ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական և հասարակական գիտութիւնների բնագավառներում: Նոր նվաճումներ արձանագրվեցին ճյուղային գիտահետազոտական ինստիտուտներում, կոնստրուկտորական բյուրոներում ու լաբորատորիաներում: Կարևոր գիտական հետազոտութիւններ կատարվեցին ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, նուրբ օրգանական քիմիայի, միկրոբիոլոգիայի և մյուս բնագավառների գիտական կոլեկտիվներում, որոնց արդյունքները պրակտիկ լայն տարածում գտան:

Հանրապետութիւնում նշանակալի աշխատանք կատարվեց նոր մաթեմատիկական մեքենաներ ստեղծելու ուղղութեամբ: Հնգամյակի սկզբում ըստեղծվեց և արտադրութեան մեջ ներդրվեց «Նաիրի-3» էլեկտրոնային հաշվիչ մեքենան, որի հեղինակներն արժանացան ՍՍՀՄ պետական մրցանակի: Հանրապետութիւնում որոշակի աշխատանք է կատարվել գիտութեան ու տեխնիկայի զարգացման, արտադրութեան մեջ գիտատեխնիկական նվաճումների արմատավորման ասպարեզում:

Իններորդ հնգամյակի տարիներին կազմակերպվել են 17 նոր գիտահետազոտական հիմնարկութիւններ և հաշվիչ կենտրոններ, այդ թվում՝ Հայկական ՍՍՀ ԳԱ մաթեմատիկայի ու մեխանիկայի ինստիտուտները, ռադիոֆիզիկական շափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը և այլն:

Հանրապետութեան գիտական հիմնարկութիւններում աճել է գիտական աշխատողների թիվը, 1977 թ. այն հասավ ավելի քան 16 հազարի: Նրանք հետազոտութիւններ են ծավալել աստղաֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, քիմիայի, երկրաբանութեան և այլ գիտութիւնների ասպարեզում:

1971—1975 թթ. ժողովրդական տնտեսութեան մեջ արմատավորվել են տեխնիկական 2400 նոր կարևորագույն միջոցառումներ, որոնցից 400-ը՝ արդյունաբերական արտադրանքների նոր տեսակների իրացման, 770-ը՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման, ավելի քան 600-ը՝ արտադրապրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման նպատակով⁹:

Նույն ժամանակամիջոցում հանրապետութեան արդյունաբերական ձեռնարկութիւններում գործարկվել են 1070 մեքենայացված հարահոս 140 ավտոմատ գծեր, կոմպլեքսային մեքենայացված և ավտոմատացված 25 ձեռնարկութիւններ:

Գիտութեան և արտադրութեան դաշինքի ամրապնդման գործում դրական աշխատանք են կատարում, օրինակ, օրգանական քիմիայի և քիմիական ֆիզիկայի ինստիտուտները: Նրանցից առաջինի և Կիրովականի քիմիական կոմբինատի, Երևանի «Պոլիվինիլացետատ» և քիմիական ռեակտիվների գործա-

⁹ «Коммунист», 15 апреля 1977.

րանների համագործակցության շնորհիվ, մասնավորապես, առաջարկվեց վի-
նիլացետատի արտադրության մնացուկների օգտագործման ինքնատիպ մե-
թոդ: Էական նշանակություն ունեն քիմիական ֆիզիկայի ինստիտուտի կա-
պերը Կիրովականի բարձրաչեքմաստիճան ջեոուցիչների գործարանի հետ:
1976 թվականից ձեռնարկությունում սկսվեցին երևանցի պիտնականների մշա-
կած մոլիբդենի և ալյ- կարծր համաձուլվածքների սինթեզման նոր առաջադի-
մական նշանակի արդյունաբերական փորձարկումները:

ՄՄԿԿ XXV համագումարում ընդգծվեց, որ արտադրողական ուժերի զար-
գացման ներկա փուլում վճռական դերը պատկանում է գիտությունը, որն
ավելի ու ավելի է դառնում անմիջական արտադրողական ուժ: Ինչպես կան-
խատեսում էր Կ. Մարքսը, հասարակական աշխատանքի արտադրողականու-
թյունը գնալով ավելի մեծ չափով է կախման մեջ լինում գիտության ընդհա-
նոր վիճակից, տեխնոլոգիայի զարգացման աստիճանից և արտադրության
մեջ գիտության կիրառումից: Մասնագետների հաշվարկներով՝ գիտությունը
անմիջականորեն արտադրողական ուժի վերածելու շնորհիվ կարելի է ապա-
հովել աշխատանքի արտադրողականության աճի 75, ազգային եկամտի աճի
50 տոկոսը և արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի իջեցման մոտ
կեսը:

Մեր երկրում գիտության զարգացման նպատակով ծախսվում է ազգային
եկամտի ավելի քան 4,5 տոկոսը: Գիտահետազոտական աշխատանքում ըզ-
բաղված են ավելի քան 1 միլիոն գիտական աշխատողներ կամ մեր մոլորակի
գիտնականների 25 տոկոսը: Ամբողջ տնտեսական շինարարության մեջ, ինչ-
պես շեշտվեց ՄՄԿԿ XXV համագումարում, այսօր ավելի հրատապ ու սպասա-
խանատու խնդիրներ չկան, քան գիտական հետազոտությունների արդյունա-
վետության բարձրացումը, արտադրության հետ գիտության կապերի ամրա-
պլընդումը և ժողովրդական տնտեսության մեջ գիտության նվաճումների արագ
արմատավորումը: Այժմ գիտատեխնիկական առաջադիմության նշանակու-
թյունը որոշվում է ոչ միայն գիտության կողմից ստացված արդյունքներով,
այլ և զգալի չափով դրանց գործնական կիրառման տեմպերով:

Ներկայումս «գիտություն-տեխնիկա-արտադրություն» շղթայում ամենա-
թուլյն այն օղակներն են, որոնք կապված են գիտության նվաճումները դործ-
նականորեն իրականացնելու, դրանք մասսայական արտադրության մեջ ար-
մատավորելու հետ: Այդ օղակներն են՝ գործարանային գիտահետազոտական
լաբորատորիաները, կոնստրուկտորական բյուրոները, տեխնոլոգիական ծա-
ռայությունները, փորձնական արտադրամասերը, ինֆորմացիոն կենտրոնները
և այլն: Սակայն նոր տեխնիկայի արմատավորման գործարանային ծառայու-
թյունները չեն բավարարում անընդհատ աճող պահանջները: ՄՄԿԿ գիտաշ-
խատողների մեծ մասը զբաղված է գիտահետազոտական ինստիտուտներում,
գիտության դոկտորների և թեկնածուների մոտ 50 տոկոսը աշխատում են
բարձրագույն ուսումնական հաստատություններում, բուհերին կից գիտահե-
տազոտական ինստիտուտներում, սլոբլեմային և ճյուղային լաբորատորիա-
ներում և զբաղված են պայմանագրային աշխատանքներով: Անմիջականորեն
արդյունաբերական ձեռնարկություններում, նախագծային և կոնստրուկտորա-
կան կազմակերպություններում զբաղված է գիտաշխատողների միայն 8 տո-
կոսը: Ըստ որում արդյունաբերական ձեռնարկությունների գիտատեխնիկա-
կան կազմակերպությունների կեսից ավելին հետազոտական լաբորատորիա-
ներ են, մեկ երրորդը՝ նախագծային-կոնստրուկտորական ստորաբաժանում-

ներ, իսկ փորձարարական կազմակերպությունները ավտոմատացման ու մեքենայացման բաժինների հետ միասին կազմում են միայն 9,2 տոկոսը:

Պրակտիկան ցույց է տալիս, որ անհրաժեշտ է հենց արտադրության մեջ ընդլայնել հետադոտուլություններն ու մշակումները, ձեռնարկություններում ըստեղծել խոշոր գիտատեխնիկական կազմակերպություններ, ամրապնդել փորձնական բազաները, ապահովել մեծ թվով գիտական կադրերի ներհույսը արտադրություն: Այդ գործում հատկապես լուրջ արդյունք է տալիս ձեռնարկությունների հետ գիտատեխնիկական հիմնարկների կազմակերպական միավորումը՝ գիտաարտադրական հզոր կոմպլեքսների ստեղծումը:

Արտադրական միավորումներում, բացի ֆաբրիկաներից և գործարաններից, ընդգրկվում են նաև գիտահետազոտական ինստիտուտները, նախագծային, կոնստրուկտորական և տեխնոլոգիական կազմակերպությունները: Միավորումների առավելություններից մեկն այն է, որ այստեղ կրճատվում են նոր տեխնիկայի մշակման, յուրացման և ներդրման հաջորդական փուլերի միջև ընկած ժամանակի կորուստները, այստեղ կենտրոնացվում են անհրաժեշտ նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները, որակյալ կադրերը: Այստեղ միասնական սիստեմի մեջ են միավորված արտադրությունը և գիտական հետազոտությունները, կոնստրուկտորական աշխատանքները: Արդյունաբերության տարբեր ճյուղերում ստեղծված գիտաարտադրական միավորումները ոչ թե ձեռնարկությունների մեխանիկական միավորումն են, այլ հանդիսանում են մի միասնական արտադրատեխնիկական կոմպլեքս, որտեղ օրգանապես միաձուլվում են գիտությունն ու արտադրությունը, լայնորեն զարգանում են արտադրության մասնագիտացումն ու կոոպերացումը: Գիտաարտադրական միավորումը գիտության և արտադրության կապի առավել նպատակահարմար ձևն է:

Գիտաարտադրական միավորումները լայն զարգացում ստացան իննեորորդ հնգամյակի տարիներին: 1975 թ. սկզբներին երկրում հաշվվում էր շուրջ 100 գիտաարտադրական միավորում: Կուտակված հարուստ փորձը վկայում է, որ գիտաարտադրական միավորումները մեծ հեռանկարներ ունեն: Նրանց բնորոշ առանձնահատկությունը «գիտություն—արտադրություն» պրոբլեմի կոմպլեքս լուծումն է: Դրանցում միաժամանակ լուծվում են պլանավորման, ֆինանսավորման և տնտեսական խթանման հարցերը: Իններորդ հնգամյակում նրանց աշխատանքի փորձը հաստատեց արտադրության մասնագիտացման և կոոպերացման այդ ձևի արդյունավետությունը:

1975 թ. դեկտեմբերի 30-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց «Գիտաարտադրական միավորումների կանոնադրությունը հաստատելու մասին»¹⁰: Այդ որոշումը կարևոր նշանակություն ունեցավ գիտության և արտադրության կապի ձևերը կատարելագործելու հարցում:

ՍՄԿԿ XXV համագումարում. ընդգծվեց, որ «գիտատեխնիկական առաջընթացի ջրառատ հոսքը կցամաքի, եթե այն մշտապես շսնուցվի ֆունդամենտալ հետազոտություններով: Կուսակցության կուրսն այն է, որ այսուհետև էլ մշտական հոգատարություն ցուցաբերվի մեծ գիտության զարգացման, նրա գլխավոր շտաբի՝ գիտությունների ակադեմիայի նկատմամբ»¹¹:

Արտադրական միավորումների գործունեության ուսումնասիրությունը

¹⁰ «Партийная жизнь», № 3, 1976, с. 10.

¹¹ «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», էջ 71:

ցույց է տալիս, որ գիտնականների և արտադրության մարդկանց համատեղ աշխատանքի շնորհիվ նոր տեխնիկայի ստեղծման և ներդրման ժամանակները կրճատվում են մոտ 2 անգամ:

Գիտության և արտադրության կապի լավագույն օրինակ կարող է ծառայել մեր հանրապետության էլեկտրատեխնիկական արդյունաբերության «Հայ-էլեկտրալույս» արտադրական միավորման ստեղծումը, որի կազմում բացի 8 ձեռնարկություններից ընդգրկված են նաև երկու կոնստրուկտորական բյուրո և թողարկվող արտադրանքի փորձարկման երեք լաբորատորիա: Դրանց գործունեության շնորհիվ IX հնգամյակի տարիներին 1970 թ. համեմատությամբ լիովին նորացվել է լուսատեխնիկական արտադրանքի տեսականին: Արտադրանքի տեխնիկական մակարդակի բարձրացման խնդիրները լուծվում են «Հայէլեկտրալույս» միավորման գլխամասային գործարանի հատուկ կոնստրուկտորական բյուրոյի կողմից: «Հայէլեկտրալույս» միավորման գործունեության ընթացքում իրականացվել են ավելի քան 200 կազմակերպական-տեխնիկական միջոցառումներ, որոնց տնտեսական արդյունավետությունը կազմում է մոտ 4 միլիոն ռուբլի¹²: Միավորման ՀԿԲ-ն մշակել և ստեղծել է «Ժիգուլի» ավտոմեքենայի լամպերի կոմպլեքսը Տոլյատիի ավտոգործարանի համար: Այդ լամպերի երեք հիմնական տեսակներ թողարկվում են Երևանի էլեկտրալամպերի գործարանում: ՀԿԲ-ի գործունեության շնորհիվ տարեցտարի մեծանում է էլեկտրական լամպերի երկարակեցությունը, հուսալիությունը, բարելավվում են դրանց տեխնիկատնտեսական մյուս ցուցանիշները: Այսպես, 15 և 30 վտ հզորության լյումինեսցենսային լամպերի այրման տևողությունը ավելացել է 3000 ժամով՝ հասնելով 15000 ժամի:

Գիտատեխնիկական առաջադիմության բնագավառում ղգալի փորձ է կուտակված նաև մեր հանրապետության «Հայէլեկտրամեքենա» և «Հայէլեկտրաշարժիչ» միավորումներում, որոնցից յուրաքանչյուրի կազմում ընդգրկված է մեկ խոշոր գիտահետազոտական ինստիտուտ: «Հայէլեկտրամեքենա» միավորման կազմում ընդգրկված կոմպլեքսային էլեկտրասարքավորումների համամիութենական գիտահետազոտական իստիտուտի մշակումների ավելի քան 60 տոկոսը կատարվում է միավորման համար, այսուհետև այդ բաժինը ավելի կմեծացվի: Ինստիտուտի հիմնական խնդիրն է՝ արագացնել տեխնոլոգիական առաջավոր պրոցեսների և սարքավորումների մշակումն ու արմատավորումը՝ տեխնիկական մակարդակը բարձրացնելու նպատակով: Գիտության և արտադրության կապերի ամրապնդման շնորհիվ այստեղ ղգալիորեն կատարելագործվել են էլեկտրական խոշոր մեքենաները, տրանսֆորմատորային ենթակայանները և գեներատորները: Մշակվել է նաև տրանսֆորմատորների նոր սերիա, որը կայացրի տոնավաճառում 1975 թ. արժանացել է ոսկե մեդալի:

Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման կազմում են պոլիմերների համամիութենական գիտահետազոտական ու նախագծային ինստիտուտը՝ իր 28 լաբորատորիաներով ու 9 գիտատեխնիկական ստորաբաժանումներով, քիմիական գործարանը՝ 6 խոշոր արտադրություններով և ինստիտուտի փորձնական գործարանը՝ երեք տեխնոլոգիական արտադրամասերով: 1975—1978 թթ. արդյունաբերության մեջ ներդրվել են ինստիտուտի 31 մշակումներ, որոնց տնտեսական արդյունքը կազմել է մոտ 11 միլիոն ռուբլի:

¹² «Ազիտատոր և Պրոպագանդիստ», № 20, 1978, էջ 13:

նոր տեխնիկայի արմատավորման գծով իրագործվել է 41 միջոցառում, ներգրաված գրեթե 220 նորարարական առաջարկույթյունների պայմանական օգուտը հասել է 2,9 միլիոն ռուբլու¹³:

Այստեղ որոշակի քայլեր են արվել արտադրանքի որակի բարձրացման ուղղությամբ. 1975 թ. 16,9-ի փոխարեն 1978 թ. պետական որականիշով թողարկվում էր արտադրանքի 30,3 տոկոսը: Միավորման թողարկած 59 տեսակի արտադրանքն սպառվում է Սովետական Միության 2500 ձեռնարկույթյուններում և 15 արտասահմանյան երկրներում: Կոլեկտիվի առաջատար ուժը և ղեկավար կորիզը՝ կուսակցական կազմակերպույթյունն է, որի անդամների ու թեկնածուների թիվն անցնում է 1.300-ից:

Արտադրական միավորման պայմաններում Գորկու ավտոմոբիլային գործարանի՝ կուսակցական կազմակերպույթյան աշխատանքի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման հիման վրա այստեղ ստեղծվել է կուսակցական կազմակերպույթյան նոր կառուցվածք: Արտադրամասերում ու ծառայույթյուններում գործում են 64 սկզբնական ու արտադրամասային կազմակերպույթյուններ (որոնցից 7-ում ընտրված են կոմիտեներ) և 85 կուսխմբեր: Դրանց աշխատանքը կոորդինացնում և ղեկավարում է միավորման կուսակցական կոմիտեն:

Կուսկոմիտեն և սկզբնական կազմակերպույթյունները որոշակի փորձ են կուտակել գաղափարական և ներկուսակցական աշխատանքի բնագավառում: Լուրջ ուշադրույթուն է դարձվում բանվորական և ինժեներատեխնիկական կադրերի որակավորման բարձրացմանը, երիտասարդ կադրերի դաստիարակույթյանն ու առաջ քաշմանը, սոցիալիստական մրցույթյան կազմակերպմանը: 115 արտադրամասի, 310 բրիգադի և 4.870 առաջավորի շնորհվել է կոմունիստական աշխատանքի հարվածայինի կոչում¹⁴: Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր ձեռնարկույթյունը բազմիցս առաջնույթյուն է շահել մրցույթյան մեջ:

Գիտույթյան և արտադրույթյան կապի ամրապնդման լավագույն փորձ է կուտակվել նաև հանրապետույթյունում՝ վերջին տարիներին ստեղծված արտադրական միավորումներում: X հնգամյակի երեք տարիների ընթացքում ստեղծվել են 37 արտադրական միավորում, որոնք մինչև այդ գործող 33 միավորումների հետ միասին թողարկում են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 48 տոկոսը: Միայն մեքենաշինույթյան մեջ գործում են 19 արտադրական միավորում (ընդգրկված են 60 ձեռնարկույթյուն և գիտական հիմնարկ), որոնք էական աշխատանք են կատարել արտադրույթյան մասնագիտացման, նոր ռեզերվների հայտնաբերման, արտադրական կարողույթյունների ռացիոնալ օգտագործման, արտադրույթյան արդյունավետույթյան բարձրացման ուղղույթյամբ: 1977 թ. ստեղծվեցին Երևանի հաստոցաշինական արտադրական միավորումը, որի կազմի մեջ են Ձերժինսկու անվան հաստոցաշինական (գլխամասային) ու Հոկտեմբերյանի հաստոցաշինական գործարանները, Երևանի ավտոմոբիլային արտադրական միավորումը (ԵՄԱՁ), որի կազմի մեջ են Երևանի ավտոմոբիլների (գլխամասային), ավտոբեռնիչների, ավտոպահեստամասերի և Չարենցավանի դարբնոցա-մամլիչային սարքավորումների գործարանները:

¹³ Տե՛ս «Սովետական Հայաստան», 11 նոյեմբերի 1978:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

Ինչպես գիտնականները, այնպես էլ արտադրություն աշխատողները մեծ աշխատանք են ծավալում գիտության և արտադրության կապի ամրապնդման խնդրի գործնական լուծման ուղղությամբ: Այդ գործում մեծ է ՍՍՀՄ գիտությանը պատկանող ազդեցության և հանրապետական ակադեմիաների դերը, որտեղ ստեղծվել և հաջողությամբ գործում են մի շարք կոմպլեքսներ, որոնք միավորում են գիտահետազոտական ինստիտուտներ և արդյունաբերական ձեռնարկություններ:

Հայկական ՍՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտնականները մշակել և արտադրությանը առաջարկել են հատկապես մաքուր դժվարահալ միացությունների ստացման նոր եղանակ: Արժեքավոր հետազոտություններ են կատարվել նաև օրգանական քիմիայի, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտներում, կենսաբանական, երկրաբանական, հասարակական գիտությունների բաժանմունքներում և նրանց ինստիտուտներում: Ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցող հարցերով են զբաղվում նաև Երևանի պետական համալսարանի և պոլիտեխնիկական ինստիտուտի տարբեր ամբիոնները:

Հանրապետության գիտական, նախագծային և կոնստրուկտորական հիմնարկների աշխատողները գիտական-ստեղծագործական ամենասերտ համագործակցության մեջ են արտադրության աշխատողների, Միության գիտնականների ու գիտական կենտրոնների հետ: Երևանը դարձել է համամիութենական ու միջազգային գիտաժողովների, գիտության տարբեր ճյուղերի մասնագետների հանդիպման, ձեռք բերված արդյունքների ամփոփման, առաջավոր փորձի փոխանակման վայր: Գիտական համագործակցության մեջ ծնվում են գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության բարձրացման նոր ձևեր ու մեթոդներ:

Ինչպես տեսնում ենք Սովետական Հայաստանի օրինակով, գիտությունը մեր երկրում արագ զարգանում է նաև բուն արտադրության մեջ, արդյունաբերության մեջ աճում է ինստիտուտների և գիտական լաբորատորիաների ցանցը: Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում բարձրանում է գիտության աշխատողների, արտադրության մասնագետների տեսակարար կշիռը: Գիտությունն ավելի ու ավելի է դառնում աշխատանքի մարդու՝ հասարակության այդ զլխավոր արտադրողական ուժի սեփականությունը:

Р. К. ЕЗЕКЯН—XXV съезд КПСС о связи науки с производством.—XXV съезд КПСС поставил задачу обеспечить дальнейшее совершенствование форм связи науки с производством, ускорить внедрение научных достижений в народное хозяйство, укрепить материальную базу научных, проектных и конструкторских организаций. В статье особое внимание уделяется роли науки в осуществлении технической политики партии, отмечаются формы связи науки с производством. Приводимые примеры показывают, что современная, наиболее целесообразная форма соединения науки с производством—это научно-производственные объединения. Оценивается деятельность ученых Армении, научных коллективов отраслевых научно-исследовательских институтов Академии наук Армянской ССР, а также роль научных, проектных и конструкторских организаций республики в ускорении темпов научно-технического прогресса и в деле укрепления связи науки с производством.